


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



**Ուսանողական գիտական
աշխատանքներին ներկայացվող
պահանջներ**

/մեթոդական ուղեցույց հոգեբանության բաժնի
ուսանողների համար/

ԵՐԵՎԱՆ - 2007

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Հ.Մ.Ավանեսյան, Ն.Գ.Խաչատրյան

**Ուսանողական գիտական
աշխատանքներին ներկայացվող
պահանջներ**

**/Մեթոդական ուղեցույց հոգեբանության բաժնի
ուսանողների համար/**

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 0 7

Երաշխավորված է Երևանի պետական
համալսարանի փիլիսոփայության և
հոգեբանության ֆակուլտետի խորհրդի կողմից

Գրախոսողներ՝ հ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս.Ամիրյան
հ.գ.թ., դոցենտ՝ Վ.Ռ.Պապոյան

**Ուսանողական գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ (մեթոդա-
կան ուղեցույց հոգեբանության բաժնի ուսանողների համար). / Կազմողներ՝
Յ.Ս.Ավանեսյան, Ն.Գ.Խաչատրյան, 2-րդ հրատ., վերամշակված և լրացված
.....**

Սույն ձեռնարկը նվիրված է ուսումնառության գործընթացում առկա կարևոր
խնդիրներից մեկին՝ ուսանողի կողմից իրականացվող ինքնուրույն գիտահետազոտական
աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջներին ու չափանիշներին: Ամփոփ ձևով
ներկայացվում են գրականության վերլուծության և փորձարարական հետազոտության
արդյունքների ներկայացման ձևերն ու միջոցները, ինչպես նաև ամբողջական
աշխատանքի ձևավորման հիմնական պահանջները: Առանձին մասով ներկայացվում են
կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար մշակված
հատուկ պահանջներ:

Ձեռնարկը հասցեագրված է ԵՊՀ հոգեբանության բաժնի բակալավրիատի և
մագիստրատուրայի ուսանողներին, կարող է օգտակար լինել նաև դասախոսների համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
1. Ընդհանուր դրույթներ	5
2. Գիտահետազոտական աշխատանքի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրություն	6
3. Թեմայի ընտրության և հիմնախնդրի որոշման հնարավոր ուղիները	10
4. Գիտահետազոտական աշխատանքի կառուցվածքը	13
5. Գիտահետազոտական աշխատանքի ներկայացման և ձևավորման հիմնական պահանջները	18
Գրականության վերլուծության ներկայացում	18
Փորձարարական հետազոտության արդյունքների ներկայացում	22
Տվյալների ներկայացման պատկերային ձևեր	23
Արդյունքների	29
մեկնաբանությունը	29
5.3 Աշխատանքի ձևավորմանը ներկայացվող պահանջներ	30
6. Կուրսային, ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին ներկայացվող առանձնահատուկ պահանջներ	31
7. Աշխատանքի նախապատրաստումը պաշտպանության և պաշտպանության ընթացքը	35
Առաջարկվող գրականություն	37
Չավելված 1. Պարբերական հրատարակություններ և ինտերնետային կայքեր	38
Չավելված 2. Տիտղոսաթերթի օրինակներ	39
Չավելված 3. Գիտական ելույթի հիմնական հաճնարարականներ և խորհուրդներ.....	41

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկով նպատակ է դրված աջակցել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում «հոգեբանություն» մասնագիտության ուսանողներին իրագործելու ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք և համապատասխանեցնել այն գիտական հանրությունում ընդունված հիմնական պահանջներին ու չափանիշներին: Գիտության՝ տվյալ դեպքում, հոգեբանության ոլորտում գիտական աշխատանքների չափանիշներին հետևելը նշանակում է մեթոդաբանական սկզբունքների պահպանում:

Ուսանողի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը (ՈՒԻԳԱ) բարձրագույն կրթության համակարգում ուսումնական ծրագրերի, գիտելիքների ստուգման և որակավորման շնորհման չափորոշիչների հիմնական բաղադրիչ մասն է:

Գիտական դեկավարի և խորհրդատուի մեր բազմամյա աշխատանքային փորձը հուշում է, որ շատ կարևոր է ունենալ համակարգված և մշակված միասնական մոտեցում ու պահանջներ, որոնք կնպաստեն ՈՒԻԳԱ-ի արդյունավետությանն ու գնահատման օբյեկտիվությանը:

Ձեռնարկում հավաքագրված են այն հիմնական տեղեկությունները և փորձարկված նյութերը, որոնք կնպաստեն կողմնորոշվել, ծրագրել, իրականացնել, ձևակերպել և ներկայացնել ՈՒԻԳԱ-ն: Այս առումով ձեռնարկում ամփոփված են ժամանակակից հոգեբանության տեսական, փորձարարական և կիրառական այն դրույթները, որոնք վերաբերում են գիտահետազոտական աշխատանքների իրականացման և արդյունքների ներկայացման աշխատանքներին: Սկզբում ներկայացվում են գիտահետազոտական աշխատանքի համար ընդհանուր դրույթները և հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը, որը թույլ կտա ուսանողներին պատկերացում կազմել գիտահետազոտական աշխատանքի էության և կառուցվածքի մասին: Այնուհետև ներկայացվում է աշխատանքի թեմայի ընտրության և հիմնախնդրի որոշման հնարավոր միջոցները և ուղիները, որոնք կարևոր նշանակություն ունեն աշխատանքի հետագա ընթացքի համար: Ձեռնարկում առանձնակի ուշադրություն է դարձվում աշխատանքի կառուցվածքի, բովանդակության և ձևավորման պահանջների կատարմանը: Մատչելի և ամփոփ ձևով ներկայացվում են գրականության վերլուծության և փորձարարական հետազոտության արդյունքների ներկայացման ձևերը և միջոցները, ինչպես նաև

ընդհանուր աշխատանքի ձևավորման պահանջները: Առանձին մասով ներկայացվում են կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար մշակված հատուկ պահանջներ և լիարժեք համարվող աշխատանքի չափանիշներ: Ձեռնարկի վերջում ներկայացվում են աշխատանքի պաշտպանությանը նախապատրաստվելու և պաշտպանության ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկություններ և հանձնարարականներ: Լիարժեք ՈՒԳԱ իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև սույն ձեռնարկում առաջարկված լրացուցիչ գրականությունը:

Ձեռնարկը օժանդակ ուղեցույց է, որտեղ հավաքագրված մեթոդական հանձնարարականները և աշխատանքի ներկայացման պահանջները ամենևին չեն սահմանափակում ստեղծագործելու և նորանուծությունների հնարավորությունը գիտահետազոտական աշխատանքի իրականացման գործում, որը սակայն պահանջում է բավարար հիմնավորում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գիտահետազոտական աշխատանքը ուսումնական գործունեության հիմնական ձևերից է, որն ուղղված է ուսանողի տեսական և կիրառական գիտելիքների խորացմանը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների, հետազոտական և մասնագիտական գործունեության ունակությունների ձևավորմանն ու կատարելագործմանը:

Բարձրագույն կրթությամբ մասնագետի պատրաստման կարևոր ձևերից են կուրսային, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը:

Ուսանողի գիտական հետազոտությունը ինքնուրույն ստեղծագործական աշխատանք է, որը նվիրված է գիտության արդի տեսական և կիրառական հիմնախնդիրներին:

Չոգեբանության բնագավառում մասնագիտացող ուսանողի հետազոտական աշխատանքը ամփոփում է ուսումնառության տարիների ընթացքում ուսումնական ծրագրում ներառված առարկաներից ստացված գիտելիքները, ինչպես նաև մանկավարժական ու արտադրական պրակտիկայի ընթացքում ձևավորված մասնագիտական հմտությունները և ունակությունները:

Ուսանողի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը (ՈՒԻԳԱ) իրականացվում է որոշակի ժամանակացույցի համապատասխան և ունի կատարման փոխկապակցված ու հաջորդական փուլեր:

Գիտահետազոտական աշխատանքի կատարման փուլերն են.

1. Թեմայի ընտրություն, ղեկավարի հետ համաձայնեցում:
2. Գիտական նյութի նախնական վերլուծություն և ընդհանրացում:
3. Չետազոտման հիմնախնդրի որոշում:
4. Չետազոտության կազմակերպում և մեթոդների ընտրություն:
5. Չետազոտության իրագործում:
6. Ստացված արդյունքների մշակում և վերլուծություն:
7. Դրույթների և եզրակացությունների ձևակերպում
8. Աշխատանքի վերջնական շարադրում և ձևավորում
9. Աշխատանքի պաշտպանություն:

Գիտահետազոտական աշխատանքներին ներկայացվում են երեք կարգի պահանջներ: Դրանք են՝ աշխատանքի կառուցվածքի, բովանդակությանը և ձևավորմանը ներկայացվող պահանջները:

2. ԳԻՏԱՂԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԶԱՍԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեթոդաբանության համապատասխան բաժիններում գիտական գործունեության իրականացման համար մշակվել են մի շարք հատուկ հասկացություններ, որոնք բխում են ճանաչողական իրադրությունից:

Ճանաչողական իրադրության ուսումնասիրումը ենթադրում է գիտական հիմնահարցի (պրոբլեմի) և նրան համապատասխան վարկածի առաջադրում:

Գիտական հիմնախնդիրը ցանկացած ուսումնասիրության ելակետն է: Գիտական հիմնախնդիրը առաջ է գալիս, երբ ճանաչողության ընթացքում առաջանում են հարցեր, որոնք կապված են տվյալ բնագավառում կամ տեսության մեջ ոչ բավարար գիտելիքների և ուսումնասիրման մեթոդների, իրարամերժ գիտական փաստերի և պատկերացումների գոյության հետ: Զետազոտության հիմնահարցը արտացոլում է այն, ինչը գտնվում է հայտնիի և անհայտի սահմանագծին: Առաջադրել հիմնահարց, նշանակում է դուրս գալ այդ սահմանագծից և շոշափել այն հակասությունները, որոնք առաջանում են հին և նոր գիտելիքների միջև¹: Գիտական հիմնահարցը պայմանավորում է հետազոտության արդիականությունը և հետազոտական նպատակի հստակեցումը:

Զետազոտության արդիականությունը հիմնավորում և ցույց է տալիս, թե ինչու է առաջ քաշած հիմնախնդիրը անհրաժեշտ լուծել ներկայում, որն էլ կապահովի հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Ցանկալի է մատնանշել հետազոտության արդիականությունը պայմանավորող հիմնական գործոնները: Ուսումնասիրման արդիականությունը սովորաբար հիմնավորում են՝ ներկայացնելով գիտական փաստեր և կատարելով հղումներ տվյալ բնագավառի առաջատար գիտնականների աշխատանքներին:

Զետազոտության նպատակը արտահայտում է գիտական ուսումնասիրության (էմպիրիկ հետազոտության, գիտափորձի, կիրառական հետազոտման և այլն) ցանկալի վերջնական արդյունքը, որը կարող է կրել տեսական կամ կիրառական բնույթ:

Ներկայում առանձնացնում են հոգեբանական հետազոտության նպատակի հետևյալ ուղղվածությունները, որոնք տարբերվում են ըստ բովանդակային կողմերի².

¹ Психология. Полный энциклопедический справочник / Общ. ред. Б. Мерещаков, В. Зинченко. – СПб., 2007. - с. 258.

² Сту` Куликов Л.В. Методология и методы психологического исследования. СПб.: ЛГОУ, 1999:

- երևույթի բնութագրերի որոշում,
- հոգեկան երևույթների միջև փոխկապակցվածության բացահայտում,
- երևույթի զարգացման դինամիկայի հետազոտում,
- երևույթի նոր առանձնահատկությունների բացահայտում,
- գիտական օրինաչափությունների ընդհանրացում,
- դասակարգման, տիպաբանության առաջարկում,
- մեթոդիկայի վերածնափոխում (մոդիֆիկացիա) և մշակում,
- հոգեախտորոշիչ մեթոդիկայի տեղայնացում,
- հոգեբանական ներազդման արդյունավետության գնահատում:

Այս առաջարկված նպատակները կոնկրետ հետազոտության մեջ կարող են այս կամ այն չափով միահյուսվել: Սակայն արդի հոգեբանական հետազոտությունները չեն սահմանափակվում միայն վերը նշված նպատակներով, ինչը պայմանավորված է գիտության զարգացման օրինաչափություններով և ժամանակի առաջադրվող պահանջներով:

Հետազոտության նպատակն ուղղակիորեն կապված է հետազոտության վարկածի հետ:

Վարկածը գիտական ենթադրություն է, որի «իրական կամ կեղծ լինելը անհայտ է, սակայն կարող է ստուգվել և ապացուցվել փորձի միջոցով գիտական հետազոտության ընթացքում»³: Գիտական վարկածը պարտադիր կերպով հիմնվում է կոնկրետ տեսական դրույթների վրա և ներառում է իր մեջ որոշակի մեթոդաբանական հիմք: Այս դեպքում վարկածային ենթադրությունները և կանխատեսումները ստանում են ավելի իրատեսական բնույթ: Հոգեբանական հետազոտություններում ավելի հաճախ հանդիպում են վարկածների երկու տեսակ՝ *կապի մասին վարկած* և *կաուզալ (պատճառային) վարկած*⁴:

Կապի մասին վարկածը ենթադրում է երկու կամ ավելի փոփոխականների փոխկապված փոփոխություններ՝ առանց նշելու մեկը մյուսի վրա ազդելու ուղղությունը, ինչը նշվում է կաուզալ վարկածներում: Կապի մասին վարկածը ենթադրում է ցուցանիշների վերլուծական համեմատություն, իսկ կաուզալը՝ փոփոխականների միջև պատճառահետևանքային կախվածություն,

³ Корнилова Т.В. Экспериментальная психология: Теория и методы. – М.: Аспект Пресс, 2003. - с. 118.

⁴ Дорфман Л. Я. Методологические основы эмпирической психологии: от понимания к технологии. – М.: Смысл, Изд. центр “Академия”, 2005. - с. 165-169.

պայմանավորվածություն: Գիտափորձում առաջարկված վարկածը ուղղված է հենց պատճառահետևանքային կապերի բացահայտմանը⁵:

Վարկածը կարող է մերժվել, սակայն երբեք չի կարող վերջնական ընդունվել: Վարկածը ենթակա է հետագա ստուգումների:

Չետազոտության խնդիրները բխում են նպատակից, այսինքն մասնավորեցնում են նպատակը և արտացոլում են նպատակին հասնելու ուղիները և միջոցները: Խնդիրները կարող են ներկայացվել ըստ փուլերի կամ ձևակերպվեն հարցադրումների միջոցով՝ արտացոլելով աշխատանքի ամբողջականությունը և տրամաբանությունը: Թվարկված խնդիրները պետք է ուղղված լինեն նպատակին և ցույց տան նպատակին հասնելու ուղին: Ելնելով հետազոտության բնույթից և նպատակից խնդիրները կարող են ըստ ուղղվածության լինել՝

- **տեսական**, որոնք ենթադրում են հիմնահարցի տեսական վերլուծություն,
- **փորձարարական**, որոնք ենթադրում են գիտափորձի ռազմավարության մշակում և կիրառում որոշակի պայմաններում,
- **կիրառական**, որոնք ուղղված են հետազոտության արդյունքում գործնական հանձնարարականների առաջադրմանը և դրանց կիրառմանը պրակտիկայում,
- **մեթոդական**, որոնք ուղղված են նոր հետազոտական մեթոդիկայի մշակմանը կամ նրանց համալիր կիրառմանը:

Չաճախակի սխալներից է, երբ հետազոտական խնդիրների ձևակերպումը փոխարինվում է աշխատանքի պլանի նկարագրությամբ (Օր.՝ մշակել գրականությունը, անցկացնել հետազոտություն, մշակել ստացված տվյալները և այլն):

Չետազոտության օբյեկտը և առարկան ձևակերպվում են՝ ելնելով նպատակից և խնդիրներից:

Առավել պարզեցված մեկնաբանության ներքո հետազոտության առարկան սահմանվում է որպես օբյեկտի այն կողմ, որն անմիջականորեն առանձնացվում է նրանում՝ ելնելով հիմնախնդրից:

Չետազոտության օբյեկտը ենթադրում է պատասխան այն հարցին, թե ինչն է ուսումնասիրվում, այսինքն՝ հոգեկան ինչ գործընթացներ, հատկություններ, որակներ, երևույթներ: Սա նշանակում է, որ հոգեբանական իրականության տարբեր երևույթները կարող է հանդես գալ հոգեբանական հետազոտության օբյեկտ:

⁵ Константинов В. В. Экспериментальная психология. Курс практического психолога. – СПб.: Питер, 2006. - с. 89.

Չետազոտության առարկան ենթադրում է պատասխան այն հարցին, թե օբյեկտի որ կողմն է անհրաժեշտ բացահայտել, այսինքն՝ հոգեկան երևույթի ինչ կապեր, հարաբերություններ, զարգացման ինչ առանձնահատկություններ, օրինաչափություններ դուրս բերել: Չետազոտության առարկան կարող է լինել ընդհանրության տարբեր աստիճանի:

Աշխատանքի գիտական արժեքը և արդյունքը պայմանավորված են հետազոտության **նորույթով** (տե՛ս էջ.), ինչպես նաև **տեսական և գործնական նշանակությամբ**: Վերջիններիս նախապայմանն է ուսումնասիրվող հիմնախնդրի արդիականության հիմնավորումը: Աշխատանքի նորույթը, տեսական և գործնական նշանակությունը ապացուցվում և հիմնավորվում են հետազոտության արդյունքների վերլուծությամբ, ստացված եզրակացությունների հիման վրա:

Բոլոր այս նշված բնութագրերի առկայությունը և հստակ ձևակերպումը ապահովում է գիտահետազոտական աշխատանքի հիմնավորվածությունը և անբողջականությունը:

3. ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Հետազոտական աշխատանքի ուղղվածությունը և թեմատիկան ուղորդվում են մասնագիտությամբ և մասնագիտացման (մագիստրոսների համար) բնագավառով, ինչպես նաև ղեկավարի գիտական իրազեկության դաշտով, որն է՝ գիտահետազոտական և գիտամանկավարժական փորձ, գիտական աստիճանի ծածկագիր, հրատարակված հոդվածների ուղղություն: Նախընտրելի է, որ ընտրված թեմայում արտացոլվի թողարկող ամբիոնների, լաբորատորիաների, գիտական խմբերի գիտահետազոտական աշխատանքների կամ ԵՊՀ-ի համատեղ իրականացվող միջամբիոնային ուսումնասիրությունների ուղղվածությունը:

Թեման ընտրելիս հարկավոր է հաշվի առնել արտադրական պրակտիկայի անցկացման վայրը:

Կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկան մշակվում է թողարկող ամբիոնների կողմից և առաջարկվում ուսանողներին: Ուսանողները կարող են ընտրել աշխատանքի թեման ներկայացված ցանկից: Նույն թեմայով գիտահետազոտական աշխատանք կարող են կատարել մի քանի ուսանողներ, եթե հետազոտման օբյեկտները և առարկանները տարբեր են:

Ուսանողին նաև տրվում է իրավունք ինքնուրույն ընտրելու աշխատանքի թեման՝ հիմնավորելով այդ ընտրության նպատակահարմարությունը:

Առաջարկվում է թեմայի ինքնուրույն ընտրության հետևյալ հնարավոր ուղիները⁶.

- արդեն կատարված հետազոտությունների կրկնություն այլ մեթոդիկաների օգտագործման միջոցով,
- ծանոթություն հատուկ գրականության հետ,
- որևէ մեկ վարկածի ստուգում, որն առաջ է քաշվել, բայց չի ստուգվել գիտնականների կողմից,
- դասախոսների հետ խորհրդատվություն արդիական հիմնախնդիրների վերծանման համար:

Թեմայի ուսումնասիրումը հիմնականում սկսվում է գրականության մատենագիտական աշխատանքից, որի արդյունքում որոշվում և հիմնավորվում է հետազոտության հիմնախնդիրը, արդիականությունը և լուծման մեթոդաբանական

⁶ Волков Б.С., Волкова Н.В., Губанов А.В. Методология и методы психологического исследования: Учебное пособие для вузов. – М.: Академический проект; Фонд “Мир”, 2005. – с. 329-330.

ճանապարհները: Այս ամբողջ աշխատանքը ներկայացվում է գրականության ակնարկի և վերլուծության մեջ, որը և կազմում է աշխատանքի տեսական մասը:

Գրականության վերլուծության միջոցով հիմնախնդիրն ուսումնասիրելիս նպատակահարմար է աշխատանքի հետևյալ հաջորդականությունը: Նախ և առաջ, կարելի է ծանոթանալ տվյալ թեմային վերաբերող հիմնական հասկացությունների հետ՝ օգտվելով հոգեբանական, ինչպես նաև հարակից գիտական բնագավառների, բառարաններից և հանրագիտարաններից: Այնուհետև, օգտակար է ծանոթանալ տվյալ ոլորտին վերաբերող պարբերական ամսագրերի հետ: Հոգեբանության համար պարբերական ամսագրերից առավել կարևորները նշված են հավելված 1-ում: Պարբերական հրատարակությունների հետ աշխատանքը նպատակահարմար է սկսել՝ ծանոթանալով ընթացիկ և վերջին տարիների համարների հետ, որտեղ կարելի է գտնել ինչպես տեսական բնույթի, այնպես էլ հետազոտական և կիրառական բնույթի հոդվածներ: Ուսումնասիրվող հիմնախնդիրն վերաբերող բոլոր հոդվածները անհրաժեշտ է ուսումնասիրել, համառոտագրել և գրառել մատենագիտական տվյալները: Սկզբնական փուլի համար ցանկալի է ծանոթանալ առնվազն 10-15 տպագրված նյութերի հետ: Այս քանակը արդեն հնարավորություն է տալիս որոշել հիմնահարցի մշակման աստիճանը և ուղղվածությունը, դուրս բերել ոչ բավականաչափ ուսումնասիրված կողմերը և ավելի հստակ ձևակերպել հետազոտության թեման և հիմնախնդիրը: Աշխատանքի հաջորդ փուլը, որը նույնպես կարող է օգտակար լինել հիմնախնդրի որոշման համար, տվյալ ոլորտում վերջին տարիների ընթացքում պաշտպանված մատենախոսությունների սեղմագրերի հետ ծանոթությունն է:

Գիտական տեղեկատվության աղբյուր կարող է ծառայել նաև Ինտերնետը: Հոգեբանության բնագավառներին վերաբերող առավել հայտնի ինտերնետային կայքերի ցուցակը նույնպես ներկայացված է հավելված 2-ում:

Գրականության ընթերցումը ավելի լավ է սկսել առավել հայտնի հեղինակների աշխատանքներից, որոնք մեծ ներդրում են ունեցել հիմնախնդրի ուսումնասիրման նախնական փուլում, որպեսզի ավելի լավ հասկանալ մյուս աշխատանքների բովանդակությունը:

Հավաքելով տվյալ հիմնախնդրին վերաբերող բավականաչափ նյութ և կազմելով անձնային մատենագիտական քարտարան՝ ավելի հեշտ է կողմնորոշվել ուսումնասիրվող հիմնահարցի, հետազոտման և խնդիրների լուծման հնարավոր ուղիների մեջ:

ՈՒԻԳԱ-ի իրականացման համար նշանակվում է գիտական ղեկավար համապատասխան ամբիոնից: Գիտական ղեկավարը հիմնականում կատարում է հետևյալ աշխատանքները.

- առաջադրանքներ է տալիս ուսանողին իրենց աշխատանքների վերաբերյալ,
- օգնում է ուսանողին աշխատանքային ժամանակացույց կազմելու և հետազոտական աշխատանքը կազմակերպելու հարցում,
- առաջարկում է գրականություն, կողմնորոշում է անհրաժեշտ գիտական գրականության մեջ,
- անցկացնում է աշխատանքային ծրագրով նախատեսված հանդիպումներ,
- խորհուրդ է տալիս աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ,
- իրականացնում է աշխատանքի ընթացիկ և վերջնական վերահսկողություն:

Աշխատանքները կկանոնակարգվեն, եթե ուսանողը ղեկավարի հետ միասին կազմի օրինակելի աշխատանքային պլան, որը բերվում է ստորև:

Գործողություններ	Ժամկետը	Կատարման մասին նշումներ
1. Գրականության վերլուծություն		
2. Հետազոտության ծրագրի կազմում		
3. Մեթոդների ընտրություն և նախնական փորձարկում		
4. Գիտափորձի իրագործում		
5. Արդյունքների մշակում		
6. Աշխատանքների շարադրում, խմբագրում և ձևավորում		

4. ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսանողների կողմից ներկայացվող աշխատանքը (կուրսային, ավարտական, մագիստրոսական) ունի հետևյալ ընդունված կառուցվածքը.

1. Տիտղոսաթերթ
2. Բովանդակություն
3. Ներածություն
4. Աշխատանքի հիմնական մաս (տեսական և փորձարարական)
5. Եզրակացություններ (կամ վերջաբան)
6. Գործնական առաջարկներ (անհրաժեշտության դեպքում)
7. Գրականության ցանկ
8. Հավելված (անհրաժեշտության դեպքում)

Տիտղոսաթերթի օրինակները կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար ներկայացված են հավելված 2-ում:

Բովանդակության մեջ հերթականությամբ ներկայացվում են աշխատանքի ներածությունը, գլուխների և ենթագլուխների վերնագրերը, եզրակացությունները, գրականության ցանկը, հավելվածները:

Գլուխների և ենթագլուխների վերնագրերի ձևակերպումները պետք է լինեն հստակ, կարճ և համատասախանեն աշխատանքի բովանդակությանը:

Աջ կողմում անհրաժեշտ է նշել բովանդակության յուրաքանչյուր կետի առաջին էջի համարը:

Բացի ներածությունից, եզրակացությունից (կամ վերջաբանից) և օգտագործված գրականության ցանկից, աշխատանքի տեսական և փորձարարական մասերի գլուխները և ենթագլուխները համարակալվում են: Բովանդակության մեջ հարկավոր չէ գրել տեսական և փորձարարական մաս, այլ միայն ներկայացնել այդ մասերի գլուխները իրենց վերնագրերով:

Հավելվածի էջակալումը չի ներառվում աշխատանքի ընդհանուր ծավալում: Եթե հավելվածները մեկից ավելին են, ապա համարակալվում են:

Ներածությունը պետք է ունենա հստակ կառուցվածք:

Ներածության մեջ սկզբից հիմնավորվում է հետազոտության *արդիականությունը* և ներկայացվում է հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանը գիտության ներկա փուլում: Այնուհետև ձևակերպվում են աշխատանքի *նպատակը*,

խնդիրները և հոգեբանական հետազոտության *վարկածը* (ըստ անհրաժեշտության նաև ենթավարկածները), որից հետո ձևակերպվում են հետազոտության *օբյեկտը* և *առարկան*: Այս ամենից հետո նշվում են և կրճատ բնութագրվում են հետազոտության *մեթոդները* և *մեթոդիկաները*, ինչպես նաև դրանց օգտագործման առանձնահատկությունները տվյալ աշխատանքում առաջ քաշված խնդիրների լուծման համար: Առանձնակի կերպով նշվում է աշխատանքի *նորույթը*, ինչպես նաև *տեսական* և *գործնական /կիրառական/ նշանակությունը*:

Ներածության վերջին մասում տրվում է ամբողջ աշխատանքի ակնարկ՝ նշելով աշխատանքի կառուցվածքը և ներկայացնելով ամեն մասի հակիրճ բովանդակությունը:

Ներածության ամեն կետը (արդիականություն, նպատակ, խնդիրներ, վարկած, օբյեկտ, առարկա, մեթոդներ և մեթոդիկաներ, նորույթ, տեսական և կիրառական նշանակություն) անհրաժեշտ է գրել նոր տողից՝ սակայն առանց համարակալելու և ենթավերնագիր ձևակերպելու: Դրանք կարելի է ընդգծել կամ առանձնացնել մուգ (**Bold**) կամ շեղ տառերով (*Italic*):

Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է տեսական և փորձարարական բաժիններից:

Տեսական բաժինը կարող է ներկայացված լինել 2-ից ավել գլուխներով, որոնք պետք է ունենան ենթագլուխներ: Գլուխների և ենթագլուխների վերնագրերի մեջ պետք է արտացոլվեն աշխատանքի նպատակի և ընտրված հիմնախնդրի ավելի մասնավոր հարցեր: Տեսական մասում կարող է ներկայացված լինել հիմնահարցի պատմությունը, քննարկվող հիմնախնդրի և առարկայի ժամանակակից վիճակի ակնարկը, խնդրի վերլուծության և լուծման հնարավոր ուղիները:

Փորձարարական բաժինը հիմնականում բաղկացած է լինում մեթոդական և վերլուծական ենթաբաժիններից:

Մեթոդական բաժինը ներկայացվում է մեկ գլխով, որի վերնագրում պետք է արտահայտվի հետևյալ միտքը՝ «*Հետազոտության կազմակերպում, մեթոդներ և ընտրված մեթոդիկաների նկարագրում*»:

Այս գլխում անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության կազմակերպումը և իրագործման փուլերը:

Անհրաժեշտ է հիմնավորել տվյալ ընտրանքի համապատասխանությունը հետազոտության նպատակին և խնդիրներին, նշել ընտրանքի կազմակերպման

սկզբունքները⁷: Այս գլխում նաև բնութագրվում է փորձարկվողների ընտրանքը (քանակը, ժողովրդագրական տվյալները՝ սեռ, տարիք, սոցիալական, ընտանեկան վիճակը, աշխատանքային փորձը, պաշտոնը և հետազոտության համար այլ կարևոր ցուցանիշներ): Այս ամենը հարկավոր է, որպեսզի տվյալները վերլուծելիս հնարավոր լինի առանձնացնել խմբեր կամ ենթախմբեր, իսկ ստացված արդյունքները լինեն համեմատելի և համադրելի: Այնուհետև անհրաժեշտ է հիմնավորել ընտրված մեթոդները և օգտագործված մեթոդիկաները՝ ուշադրություն դարձնելով դրանց վալիդությանը, հուսալիությանը, ինչպես նաև հետազոտության խնդիրներին համապատասխանությանը: Անհրաժեշտ է թվարկել այդ մեթոդիկաները, իսկ, առանձնակի դեպքերում, եթե դրանք անժամոք են կամ մշակվել են հեղինակի կողմից, մանրամասն բնութագրել: Այս ամենից հետո անհրաժեշտ է նաև նշել մաթեմատիկական վիճակագրական մեթոդները, որոնք օգտագործվել են արդյունքների վերլուծության համար: Կարելի է նաև նշել այն բանաձևերը, որոնցով կատարվել են չափանիշների հաշվարկները:

Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև հետազոտության իրագործման փուլերի հաջորդականությունը՝ նշելով կատարված գործողությունները, յուրաքանչյուր փուլի խնդիրները, իրականացման ժամկետները և այլն:

Վերլուծական բաժինը կարող է ներկայացվել մեկից ավելի գլուխներով, որոնց վերնագրերը պետք է արտահայտեն աշխատանքում առաջ քաշված խնդիրներին փորձարարական միջոցներով ստացված լուծումները: Այս բաժնում մանրամասն ներկայացվում է տարբեր մեթոդիկաներով ստացված տվյալների մշակումը, ցուցանիշների միջև վերլուծությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների մեկնաբանությունը:

Գիտական հետազոտության եզրակացություններ

Ընդհանրացումներից և մեկնաբանություններից հետո անհրաժեշտ է անել եզրակացություններ, որոնք ամփոփում են հետազոտության կոնկրետ փուլի արդյունքները: Ընթացիկ եզրակացությունները ներկայացվում են փորձարարական մասում, իսկ ամփոփիչ եզրակացությունները՝ փորձարարական մասից հետո առանձին կետով:

⁷ Ермолаев О.Ю. Математическая статистика для психологов: Учебник. – М., Московский психолого-социальный институт: Флинта, 2004. - с. 29-34; Практикум по общей, экспериментальной и прикладной психологии / Под ред. А.А.Крылова, С.А.Маничева. - СПб.: Питер, 2003. - с. 5-32.

Եզրակացությունների մեջ պետք է արտացոլվեն հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ստացվել են առաջադրված խնդիրների լուծման արդյունքում: Եզրակացությունները արտահայտում են նաև ապացուցվել է արդյոք, թե հերքվել է վարկածը, ինչպես նաև այն, թե որքանով է իրագործվել նպատակը:

Հիմնական եզրակացությունների մեջ կարող են արտահայտվել աշխատանքի ինչպես տեսական, այնպես էլ հետազոտական արդյունքները: Վերջիններիս ներկայացումը առավել նշանակալի է:

Հստակ և ամփոփ ձևակերպված եզրակացությունները գիտական հետազոտության հիմնական և գլխավոր արդյունքն են: Եզրակացությունների ձևակերպման հաճախակի սխալներից է այն, որ եզրակացությունների մեջ ներկայացվում է, թե ինչ է արվել, այնինչ պետք է նշել կոնկրետ ինչ է ստացվել:

Եզրակացությունների քանակը չի սահմանափակվում, սակայն ցանկալի է ներկայացնել ոչ ավել քան 6-7 եզրակացություն: Եթե եզրակացությունները բավականին շատ են, ապա կարելի է դրանք խմբավորել և ներկայացնել ենթակետերով: Եզրակացությունները անհրաժեշտ է համարակալել:

Գործնական առաջարկները ներկայացվում են անհրաժեշտության դեպքում, երբ աշխատանքը ունի վառ արտահայտված կիրառական նշանակություն և աշխատանքի խնդիրների մեջ ձևակերպվել է կոնկրետ կիրառական արդյունքի մշակում: Տվյալ դեպքում այս մասում ներկայացվում են, օրինակ, առաջարկված ծրագրի մոդելը կամ կոնկրետ հանձնարարականներ ուղղված այս կամ այն սուբյեկտներին, խմբերին և այլն:

Գրականության ցանկը կազմվում է այբբենական կարգով: Գրականության աղբյուր կարող են ծառայել մենագրություններ, գիտական հոդվածների ժողովածուներ, պարբերական ամսագրերի հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, քրեստոմատիաներ, բառարաններ, գիտական աշխատանքի սեղմագրեր, միջազգային գիտաժողովների նյութեր, ինչպես նաև ինտերնետային կայքերում տեղադրված գիտական նյութեր:

Գրականության ցանկում առաջին հերթին նշվում են հայրենական հեղինակների աշխատանքները, այնուհետև՝ արտասահմանյան:

Գրականության աղբյուրները համարակալվում են արաբական թվերով: Գրականության աղբյուրի ներկայացման համար նշվում է հետևյալ անհրաժեշտ ինֆորմացիան՝ հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը,

գրքի անվանումը, հրատարակման վայրը, տպագրությունը, տպագրության տարեթիվը, էջերի քանակը: Սակայն գրականության ներկայացման մեջ կան որոշ տարբերություններ՝ կախված հրատարակության բնույթից:

Օրինակներ՝

Մենագրության՝

Կուն Ս.Թ. Գիտական հեղափոխությունների կառուցվածքը: Եր., Ջանգակ-97, 2004, 328 էջ

Брушлинский А.В. Проблема психологии субъекта. – М.: Институт психологии РАН, 1994. – 109с.

Sheppard M. Care management and the new social work. London, 1997. 365p.

Քրեստոնատիայից նյութ՝

Хейли Дж., Эриксон М. Возникновение семьи. Психология и психотерапия семейных конфликтов / Под ред. Д. Я. Райгородского. – Самара: Издательский Дом БАХРАХ-М, 2003. – с.3-16.

Հոդված գիտական հոդվածների ժողովածուից՝

Սարգսյան Վ. Լեզիտիմության չափանիշների բացահայտման դերացանկային մեթոդիկայի հիմնավորումը / Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջբուհական գիտական հոդվածների ժողովածու: Եր., «Ջանգակ-97», 2007, էջ 49-55

Պարբերական ամսագրի հոդված՝

Панов В.И. Психические состояния как объект и предмет психологического исследования // Мир психологии. 1998. N2. с. 20-35.

Ինտերնետային կայքերում տեղադրված գիտական նյութ՝

Джеймс У. Многообразие религиозного опыта /[http:// www.psylib.org.ua/ books/james01/index.htm](http://www.psylib.org.ua/books/james01/index.htm)

Հավելվածում ներկայացվում է աշխատանքի համար օժանդակ նյութը (օրինակ՝ ամբողջ ընտրանքի տվյալները, սկզբնական հաշվարկներ, աշխատանքի ծրագիրը, իյուստրացիաներ, փորձարկվողների առանձին աշխատանքներ և այլն): Յուրաքանչյուր հավելվածը պետք է սկսվի նոր էջից: Էջի վերևում նշվում է «Հավելված» իր համարով, որի տակից գրվում է հավելվածի վերնագիրը:

5. ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

5.1 Գրականության վերլուծության ներկայացում

Գրականության վերլուծությունը կատարվում է գիտական ոճով, որի հիմնական պահանջն է նյութի ներկայացման հաջորդականությունը և տրամաբանվածությունը:

Տեքստը պետք է կրի վերլուծահամադրական և ընդհանրացված բնույթ: Սա նշանակում է, որ գիտական փաստերի, տեսությունների և հայեցակարգերի ներկայացման հետ մեկտեղ, կարևոր է համեմատել տարբեր հեղինակների տեսակետները, վերլուծել և ընդհանրացնել դրանք, կատարել որոշ եզրահանգումներ:

Գրականության վերլուծության մեջ անպայման պետք է ներկայացվի տվյալ հիմնախնդրին առնչվող հիմնական տեսությունները և հայեցակարգերը, տվյալ ոլորտում հայտնի հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները, գոյություն ունեցող հիմնական ուսումնասիրությունները և հետազոտությունները: Անհրաժեշտ է նաև ներկայացնել գիտական խնդրի շուրջ սեփական կարծիքը և մոտեցումները՝ հիմնավորելով դրանք:

Գրականության վերլուծության տրամաբանությունը կարող է հիմնվել հետևյալ մոտեցումների վրա⁸.

1. ներկայացնել տվյալ ոլորտում հետազոտությունների ժամանակագրությունը (պատմական մոտեցում),
2. ցույց տալ յուրաքանչյուր հեղինակի ներդրման նշանակությունը ուսումնասիրվող հիմնախնդրի մեջ (պերսոնոլոգիական մոտեցում),
3. անցում կատարել ընդհանուր հիմնախնդրի ուսումնասիրումից ավելի կոնկրետ երևույթների, դրանց դրսևորման առանձնահատկությունների նկարագրությանը (դեդուկտիվ մոտեցում),
4. անցում կատարել մասնավոր հետազոտությունների դիտարկումից դեպի ընդհանուր եզրակացությունների, մոտեցումների ներկայացմանը (ինդուկտիվ մոտեցում),
5. վերլուծել ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումների առանձնահատկությունները (վերլուծական մոտեցում),

⁸ Տես՝ Константинов В. В. Экспериментальная психология. Курс практического психолога. – СПб.: Питер, 2006. - с. 244-246:

6. Երկայացնել հիմնախնդրի առանձին կողմերի վերաբերյալ տարբեր հեղինակների ուսումնասիրությունները (ֆենոմենոլոգիական մոտեցում):

Գրականության վերլուծության կառուցման բոլոր այս ուղիները կարող են որոշ չափով համադրվել՝ կախված հեղինակի մտահղացումից և տվյալ գիտական նյութի յուրահատկությունից: Միևնույն ժամանակ, ցանկալի է, որ գրականության վերլուծության մեջ հնարավորինս քննարկվեն բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են ուսումնասիրվող հիմնախնդրին:

Տեքստի յուրաքանչյուր գլուխը կամ ենթագլուխը Երկայացնելիս նպատակահարմար է այն սկսել ուսումնասիրվող խնդրին վերաբերող ներածական խոսքով: Անհարժեշտ է նաև ավարտել աշխատանքի ցանկացած գլուխը կամ ենթագլուխը՝ ամփոփելով տվյալ խնդրին վերաբերող նյութը:

Տեսական վերլուծությունը լիարժեք Երկայացնելու համար չի կարելի այն հանգեցնել մեկ-երկու աղբյուրներից ամբողջ էջերի արտագրելուն, ինչպես նաև, հղումները թողնել առանց մեկնաբանության:

Գիտական աղբյուրներին հղումներ կատարելու կանոններ

Գրականության վերլուծությունը իրականացվում է՝ կատարելով հղումներ տարբեր գիտական աղբյուրներին: Հղումների համար ցանկալի չէ օգտագործել բազմաթիվ ուսումնական դասագրքեր:

Տեքստի Երկայացման համար անհրաժեշտ է հետևել հղումների կատարման կանոններին: Հղումները կատարվում են նախադասության վերջում, միանգամից մեջբերվող մտքից հետո:

Հղումները կարող են լինել *ուղիղ* և *միջնորդավորված*:

Ուղիղ հղման դեպքում սկզբնաղբյուրի տեքստը գրվում է չակերտների մեջ և վերարտադրվում է առանց որևէ փոփոխության: Չակերտից հետո քառակուսի փակագծերի մեջ նշվում է աղբյուրի համարը, ըստ որի այն Երկայացված է օգտագործված գրականության ցանկում, և էջը, որտեղ տվյալ միտքը նշված է սկզբնաղբյուրում: Եթե դրվում են կլոր փակագծեր, ապա փակագծերի մեջ նշվում է հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը, գրքի տարեթիվը և էջը:

Օրինակ՝

«Առավելապես անհատական կեցությամբ է պայմանավորված անձնային այնպիսի խորքային բնութագրությունների կազմավորումը, ինչպիսիք են բնավորությունը, խառնվածքը, <.....> նույնիսկ, աշխարհայացքային հիմնական կողմնորոշումները» [8, էջ 34]:

կամ

«Առավելապես անհատական կեցությամբ է պայմանավորված անձնային այնպիսի խորքային բնութագրությունների կազմավորումը, ինչպիսիք են բնավորությունը, խառնվածքը, <.....> նույնիսկ, աշխարհայացքային հիմնական կողմնորոշումները» (Յր. Շաքարյան, 1997, էջ 34):

Եթե սկզբնաղբյուրից հեղինակի միտքը մեջբերվում է ոչ ամբողջությամբ, ապա բացակայող մասի փոխարեն պետք է դնել կետեր (*տե՛ս ներկայացվող օրինակը*):

Այս կարգի հղումները օգտագործվում են այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ընթերցողի ուշադրությունը դարձնել այս կամ այն մտքի հստակ ձևակերպման վրա կամ հիմնավորել որևէ դրույթ՝ հիմնվելով հեղինակությունների վրա: Այս հղումները, որպես կանոն, չեն լինում շատ երկար:

Միջնորդավորված հղումները վերարտադրում են բնագրին մոտ արտահայտված ուրիշի միտքը, դասակարգումը, տեսակետը, փաստացի ինֆորմացիան: Հարկավոր է փորձել վերաձևակերպել այդ միտքը՝ պահպանելով հեղինակի մտքի իմաստը: Այս դեպքում տվյալ միտքը չի դրվում չակերտների մեջ, սակայն նախադասության վերջում կլոր կամ քառակուսի փակագծերի մեջ նշվում է այն աղբյուրը, որտեղից այն վերցված է: Եթե ներկայացվում է միայն աղբյուրի հետազոտության ուղղությունը, որևէ տեսության կամ հայեցակարգի ընդհանուր գաղափարը, ապա քառակուսի փակագծերի մեջ միայն նշվում է աղբյուրի համարը՝ [5], ըստ գրականության ցանկի համարակալման, իսկ կլոր փակագծերի մեջ՝ հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը, գրքի տարեթիվը՝ (Гальперин П., 2002): Միջնորդավորված հղման ժամանակ փակագծերի մեջ էջերը նշվում են այն դեպքում, եթե մեջբերվող նյութը (կոնկրետ փաստեր, տեսակետ, հեղինակի մտքեր և այլն) սկզբնաղբյուրում ներկայացված է կոնկրետ էջերի վրա: Օրինակ՝ [6, էջ 40-42] կամ (Старовойтенко Е., 2007, էջ 219):

Եթե հղում է կատարվում մի քանի աղբյուրներին, ապա փակագծերի մեջ նշվում են բոլոր այդ աղբյուրները՝ առանձնացվելով իրարից: Օրինակ՝ [6;9;18] կամ (Корнилова Т., 2003; Ермолаева О., 2004; Bur n, 2001):

Եթե հաջորդական հղում է կատարվում նույն աղբյուրին, ապա երկրորդ անգամ փակագծերում անհրաժեշտ չէ նորից նշել աղբյուրը, այլ միայն գրել (նույն տեղում, էջ 56): Հաջորդական հղումների կարիք է զգացվում սովորաբար, երբ որևէ աղբյուր վերլուծվում է մանրամասն:

Այն դեպքում, երբ հետազոտողը իր աշխատանքի համար կարևորում է որևէ գիտնականի տեսակետը կամ մոտեցումը, որի գիրքը հասանելի չէ, բայց այդ տեղեկության հետ նա ծանոթացել է մեկ այլ աղբյուրից, ապա կարելի է հղում կատարել վերջինի վրա: Այս դեպքում հղումը կատարվում է հետևյալ կերպ. [մեջբերվում է ըստ 7, էջ 69] կամ (մեջբերվում է ըստ Петрова В., 2007, էջ 69): Այսպիսի հղումների դիմում են հնարավորինս քիչ:

Բացի տեքստային հղումներից, կիրառվում է նաև աղյուսակների և նկարների մեջբերում, որոնք նույնպես կատարվում են նշված կանոններին համաձայն:

Ցանկալի է ամբողջ տեքստում կատարել միատիպ հղման ձև՝ օգտագործելով քառակուսի կամ կլոր փակագծեր:

Հղումները տեքստում արվում են միայն այն աղբյուրների համար, որոնք նշված են աշխատանքի գրականության ցանկում:

Միևնույն ժամանակ պետք չէ հագեցնել աշխատանքի գլուխը կամ պարագրաֆը հղումներով, քանի որ աշխատանքը կրում է վերլուծահամադրական բնույթ: Օրինակ, բնութագրելով որևէ հասկացություն, պետք է սեփական բառերով վերարտադրել այդ հասկացության վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետները և մեկնաբանությունները: Անհրաժեշտ է համեմատել տարբեր կարծիքներ՝ ցույց տալով նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև դուրս բերել գիտնականների վերլուծությունների արդյունքում առավել հիմնավորված և հանդիչ եզրահանգումներ, իսկ անհրաժեշտության դեպքում, անել սեփական դատողություններ և եզրահանգումներ:

Հղումները տեքստում կատարում են մի քանի կարևոր գործառույթ.

ա) հղումների միջոցով արտահայտվում է հարգանք հեղինակային իրավունքի նկատմամբ,

բ) հղումները ուղղություն են տալիս ընթերցողին, թե ո՞ր հեղինակների աշխատանքներից և ո՞ր աղբյուրներից կարելի է լրացուցիչ տեղեկություն ստանալ հիմնախնդրի շուրջ:

Պետք է հիշել, որ աշխատանքի տեսական վերլուծությունը պետք է արտացոլի հիմնախնդրի քննարկումը և իմաստավորումը հեղինակի կողմից:

5.2 Փորձարարական հետազոտության արդյունքների ներկայացում

Հետազոտական աշխատանքի ներկայացման տրամաբանությունը ենթադրում է արդյունքների մշակում, վերլուծություն, մեկնաբանում և եզրակացությունների ձևակերպում:

Գիտական վերլուծությունը ենթադրում է ստացված արդյունքների ամբողջությունից առավել կարևոր և նշանակալի տվյալների դուրս բերում, համեմատում, դրանց քանակական և որակական ամփոփում: Գիտական վերլուծության անհրաժեշտ որակը նրա ապացուցելի լինելն է: Վերլուծությունը պետք է հիմնվի փաստերի, քանակական ցուցանիշների, ինչպես նաև որակական բնույթի օրինակների վրա:

Հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ պետք է հետևել աշխատանքում առաջ քաշած խնդիրների հաջորդականությանը:

Հետազոտության արդյունքների նկարագրման համար հիմնականում բնորոշ է հետևյալ ալգորիթմը.

- Անցկացված գիտափորձի (չափման, ...) ընդհանուր արդյունքները, որոնք ստացվել են տվյալ մեթոդիկայով, ներկայացված են աղյուսակում;
- Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից, փորձարկվողները տարբերվում են (բնութագրվում են)
- Սա բացատրվում է (կարելի է բացատրել) նրանով, որ (օբյեկտիվ, սուբյեկտիվ գործոնների, սոցիալական և այլ պայմանների ազդեցությունը);
- Արդյունքների հետագա մշակումը, այդ թվում նաև մաթեմատիկական վիճակագրության մեթոդների միջոցով, ցույց է տալիս, որ.....
- Վերլուծությունը թույլ է տալիս դուրս բերել տարբերություններ, կորելյացիոն կապեր (օրինակ՝ $r=0,68$ կամ $r=0,72$ կամ $r=0,86$, երբ $n=35$) հավաստիության աստիճանի դեպքում ($P \leq 0,05$ կամ $P \leq 0,01$ կամ $P \leq 0,001$);
- Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ

Գոյություն ունեն որոշ առանձնահատկություններ, որոնք հատուկ են կիրառական հոգեբանության ոլորտում կատարած գիտական հետազոտությունների արդյունքների ներկայացմանը: Այս դեպքում ենթադրվում է ողջ գործընթացի (հոգեբանական օգնություն, խորհրդատվություն, ախտորոշում, հոգեշտկողական կամ զարգացնող աշխատանք) պարզ և բավական մանրամասն նկարագրություն: Անհրաժեշտ է ցույց տալ կատարած աշխատանքի և ընտրված

մեթոդիկաների նորությունը և յուրահատկությունը՝ ի տարբերություն ավանդական մոտեցման: Արդյունքների ներկայացման ժամանակ համեմատվում են այցելուի (մասնակցի) վարքի առանձնահատկությունները աշխատանքի սկզբում, ընթացքում և վերջում, ապացուցվում են տեղի ունեցող փոփոխությունները, այդ թվում, որոշ քանակական ցուցանիշների օգտագործմամբ: Ինչպես փորձարարական հետազոտության ներկայացման դեպքում, այստեղ նույնպես նշանակալի է փաստերի վրա հիմնվելը, որն ապացուցում է գործնական հոգեբանական աշխատանքի արդյունքների համոզիչ լինելը:

Տվյալների ներկայացման պատկերային ձևեր

Փորձարարական տվյալների ներկայացման համար օգտագործում են այնպիսի պատկերային ձևեր, ինչպիսիք են աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, հիստոգրամներ, ինչպես նաև տարբեր տիպի իլյուստրացիաներ: Դրանք տեղադրվում են աշխատանքում անմիջապես տեքստից հետո, որտեղ այդ տվյալները հիշատակվում են:

Թվային նյութը նպատակահարմար է ներկայացնել *աղյուսակների* միջոցով:

Գրաֆիկը օգտագործվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է ցույց տալ փոփոխականների միջև կախվածություն: Գրաֆիկները կարող են ունենալ համատեղվող տեսք, որն առավել պատկերավոր է ցույց տալիս դուրս բերված տարբերությունները կամ գործընթացների դինամիկան:

Դիագրամները հիմնականում օգտագործվում են մեծությունների միջև որոշ հարաբերակցություն պատկերելու համար: Դիագրամների տեսակի ընտրությունը կախված է խնդրի լուծման բնույթից: Դիագրամները պետք է լինեն պարզ և պատկերավոր: Դիագրամների կառուցման համար նպատակահարմար է օգտվել Microsoft Excel-ի աղյուսակային խմբագրից, որտեղ ներկայացված են տարբեր տեսակի դիագրամներ: Նկար 1-ում պատկերված է սեկտորային դիագրամ, իսկ նկար 2-ում՝ համատեղվող:

Հիստոգրամները սյունակային դիագրամներ են, որոնք օգտագործվում են հաճախականային բաշխումը պատկերային ձևով ներկայացնելու համար, որտեղ դեպքերի քանակը պատկերվում է ուղղահայաց սյունակների տեսքով: Հիստոգրամները նաև օգտագործվում են տարբեր փորձարարական խմբերի կամ ցուցանիշների համեմատական վերլուծությունը պատկերավոր ներկայացնելու համար (Տե՛ս նկար 3):

Օգտագործվում են նաև *հյուստրացիաներ* (լուսանկարներ, գծանկարներ և այլն) շարադրվող նյութին պատկերավոր, հստակ բնույթ տալու, էական կապերը, բնութագրերը ընդգծելու նպատակով:

Կորեկացիոն վերլուծության դեպքում ցուցանիշների միջև կորեկացիոն կապերը ցույց տալու համար օգտագործվում է գծանկար, որը կոչվում է *կորեկացիոն պլեադա* (Տե՛ս նկար 4): Կորեկացիոն կապերի ներկայացման մյուս տարածված ձևն է *կորեկացիոն ցանցը* (Տե՛ս նկար 5):

Աղյուսակների, գրաֆիկների, դիագրամների, կորեկացիոն կապերը արտահայտող գծանկարների կառուցման սկզբունքների հետ կարելի է ծանոթանալ փորձարարական հոգեբանության գրքերից⁹:

Բոլոր աղյուսակները և նկարները սովորաբար ունենում են իմաստ արտահայտող վերնագիր, որն ամփոփ ձևով բնորոշում է աղյուսակի և նկարների տվյալների նշանակությունը:

Բոլոր գրաֆիկները, դիագրամները, գծանկարները աշխատանքում նշանակվում են որպես *նկարներ*:

Յուրաքանչյուր աղյուսակ և նկար անհրաժեշտ է համարակալել: Աղյուսակի վերնագիրն իր համարի հետ նշվում է վերևում աջից, իսկ նկարինը իր համարով՝ ներքևում ձախից: Յուրաքանչյուր աղյուսակ կամ նկար պետք է համարակալվի հաջորդական համարակալմամբ ամբողջ աշխատանքի սահմաններում: Օրինակ, (Աղյուսակ 1 – վերնագիրը, Նկար 1 – վերնագիր): Ընդունելի է նաև աղյուսակների և նկարների համարակալումը մեկ գլխի սահմաններում: Այդ դեպքում համարակալումը ունի հետևյալ տեսք (Աղյուսակ 2.3 – վերնագիր, Նկար 2.3 – վերնագիր), այսինքն, երկրորդ գլխի երրորդ աղյուսակը կամ երկրորդ գլխի երրորդ նկարը:

Աղյուսակների սյունակները և լուսանցագիրը պետք է ունենան իրենց անվանումը կամ նշանակումը (Տե՛ս աղյուսակ 1): Եթե սյունակի անվանումը երկար է, այն կարելի է կրճատել կամ գրել ընդունված հապավումը: Եթե աղյուսակը բաժանվում է մասերի՝ մյուս էջն անցնելու պարագայում, ապա մյուս էջի վրա աղյուսակի սյունակների վերնագրերը այլևս չեն գրվում: Միայն պետք է համարակալել այդ սյունակները ըստ սյունակների քանակի արաբական թվերով

⁹ Мартин Д. Психологические эксперименты. Секреты психики. – СПб., 2004; Ермолаев О.Ю. Математическая статистика для психологов: Учебник. – М., Московский психолого-социальный институт: Флинта, 2004; Практикум по общей, экспериментальной и прикладной психологии / Под ред. А.А.Крылова, С.А.Маничева.- СПб.: Питер, 2003.

(Տե՛ս աղյուսակ 1 օրինակի 2-րդ տողը): Այս դեպքում «Աղյուսակ» բառը չի գրվում, այլ նշվում է՝ «Աղյուսակի շարունակություն» իր համարով:

Բոլոր գրաֆիկներում և դիագրամներում պիտի նշանակվի, թե ուղղահայաց և հորիզոնական առանցքները ինչ քանակական պարամետրեր են (տոկոս, թեստի միավոր, րոպե և այլն) արտահայտում:

Եթե աշխատանքում միայն մեկ աղյուսակ է կամ նկար, ապա այն չի համարակալվում:


Աղյուսակի օրինակ՝

Աղյուսակ 1.

Չետագոտական խմբերի թեստավորման վիճակագրական ցուցանիշները (մասնակիցների քանակը, n = 35)


N	Ցուցանիշի անվանում	1-ն խումբ	2-րդ խումբ
1	2	3	4
1			
2			
.....			
Σ- գումար			
X- միջին			

Դիագրամների օրինակ՝




Նկար 1. Պատասխանների տոկոսային (%) հարաբերությունը

միավոր




Նկար 2. Գրանցվող ցուցանիշների փոփոխությունները 1-ին և 2-րդ օրերին

Հիստոգրամի օրինակ`



Նկար.3 Խմբերի միջին ցուցանիշների համեմատություն

Կորելյացիոն պլեադայի օրինակ`



Ծանոթագրություն`

Ուղիղ կապ —————

Հակադարձ կապ - - - - -

Նկար 4. Ռեսանդների անձնային գործոնների կորելյացիոն պլեադա

Կորելյացիոն ցանցի օրինակ`

	A	B	C	E	G	H	I	L	N	O	Q1	Q2	Q3	Q4
A		0,43	0,31	-0,01	0,24	0,26	-0,19	0,32	0,09	0,27	-0,05	0,28	0,15	-0,07
B			-0,54*	0,54*	-0,70**	0,00	-0,17	0,24	0,01	0,29	0,19	-0,46*	-0,63**	0,59*
C				0,02	0,28	-0,28	0,21	0,15	0,44	-0,11	-0,25	0,43	0,22	-0,81**
E					-0,05	0,27	-0,04	0,59*	0,57*	-0,07	0,02	-0,14	-0,33	0,08
G						0,59*	0,35	0,17	0,36	-0,81**	0,30	0,36	0,41	-0,19
H							0,16	0,09	0,40	-0,62**	0,31	-0,30	0,35	0,40
I								-0,30	0,69**	-0,36	0,54*	0,75**	-0,30	-0,41
L									0,09	-0,48*	0,32	-0,11	-0,36	0,30
N										-0,35	0,22	0,37	-0,1	-0,42
O											-0,73**	-0,23	0,01	-0,2
Q1												0,32	-0,59*	0,40
Q2													-0,33	-0,66**
Q3														-0,2

p < 0.05; ** p < 0.01

Նկար 5. Փորձարկվողների կորելյացիոն վերլուծության արդյունքները

Անհրաժեշտության դեպքում աղյուսակից կամ նկարներից անմիջապես հետո նշվում է «Ծանոթագրություն» պարզաբանող տեքստով: Եթե ընդամենը մեկ ծանոթագրություն է, ապա այն չի համարակալվում, իսկ եթե երկուսից ավել՝ համարակալվում է:

Օրինակ՝

Ծանոթագրություն _____

կամ

Ծանոթագրություն. 1. _____

2. _____

Աղյուսակների, նկարների մեջ նշված տեքստային նշանակումները, ինչպես նաև ծանոթագրության նյութը գրվում են սովորաբար հիմնական տեքստից ավելի փոքր տառաչափով:

Արդյունքների վերլուծության համար ոչ էական տվյալները կամ նյութը (օր.՝ սկզբնական տվյալներ, աշխատանքի ծրագիր և այլն) ներկայացվում է հավելվածում:

Բոլոր աղյուսակների և նկարների պատկերային ներկայացումից հետո տրվում է դրանց տեքստային նկարագրությունը: Յուրաքարչյուր աղյուսակի, գծանկարի, դիագրամի բառային նկարագրության բացթողումը համարվում է մեթոդական սխալ: Սխալ է համարել, որ աղյուսակում կամ նկարում ամեն ինչ երևում է: Տեքստով պետք է նշել բոլոր նմանությունները և տարբերությունները ըստ մեծության, ցուցանիշների նվազագույն և բարձրագույն արժեքները և այլն: Տվյալների մանրամասն նկարագրությունը օգնում է արդյունքների վերլուծությանը և ընդհանրացմանը, եզրակացությունների ապացուցիչ լինելուն:

Բոլոր աղյուսակների և նկարների համար տեքստում կատարվում են հղումներ: Աղյուսակների հղումների դեպքում գրվում է. «Համաձայն աղյուսակ 1-ի տվյալների.....», «Ինչպես երևում է աղյուսակ 5-ից», «Աղյուսակ 4-ում բերված արդյունքները ցույց են տալիս, որ....» կամ հղումը տրվում է փակագծերի մեջ (Աղյուսակ 5): Նկարների հղումների դեպքում նույնպես գրվում է. «Ինչպես երևում է նկար 1-ից...», «Ինչպես ներկայացված է նկար 5-ում...», «Նկար 3-ից երևում է, որ» կամ հղումը տրվում է փակագծերի մեջ (Նկար 5): Եթե անդրադառնում են նկարին, որը գտնվում է այլ էջի վրա, ապա հղումը կատարում են հետևյալ կերպ (Տե՛ս նկար 5) կամ (Տե՛ս նկար 5, էջ 26):

Հավելվածից հղում կատարելու դեպքում գրվում է. «Գիտափորձի տվյալների առաջնային մշակման արդյունքում ստացված տվյալները ներկայացված են Հավելված 1-ում» կամ «Հոգեշտկող աշխատանքի ծրագիրը ներկայացված է Հավելված 2-ում»:

Բանաձևերը անհրաժեշտ է առանձնացնել տեքստից և գրել նոր տողով: Եթե բանաձևը չի տեղավորվում մեկ տողում, ապա այն պետք է տողադարձել, սակայն հավասարության նշանի կամ այլ մաթեմատիկական նշաններից հետո, ընդ որում, այդ նշանը անպայման պետք է կրկնել հաջորդ տողում: Բանաձևի վերևից և ներքևից պետք է թողնել ազատ առնվազն մեկ տող: Բանաձևերը համարակալվում են արաբական թվերով տվյալ գլխի կամ ենթագլխի սահմաններում՝ տեղավորելով համարը բանաձևի վերջին տողի աջ կողմում կլոր փակագծերի մեջ, օրինակ (2.1), այսինքն, երկրորդ գլխի առաջին բանաձևը: Բանաձևի բոլոր գործակիցների և սիմվոլների նշանակությունները բերվում են միանգամից բանաձևի հաջորդ տողում, որը սկսվում է «որտեղ» բառով:

Օրինակ՝ միջին թվաբանականի և միջին քառակուսային շեղման (Ստյուդենտի գործակից) հաշվարկման համար կիրառվում են հետևյալ բանաձևերը՝

$$\bar{x} = \frac{\sum x}{n}, \quad (2.1)$$

$$\sigma = \sqrt{\frac{\sum (x - \bar{x})^2}{n}}. \quad (2.2)$$

որտեղ \bar{x} -ը՝ միջին թվաբանականն է, x -ը ուսումնասիրվող շարքի յուրաքանչյուր մեծությունը, \sum -ը՝ գումարը, σ -ն՝ միջին քառակուսային շեղումը, n -ը՝ ուսումնասիրվող շարքի անդամների քանակը:

Եթե տեքստում միայն մեկ բանաձև է, ապա այն չի համարակալվում:

5.2.2 Հետազոտության արդյունքների մեկնաբանություն

Հետազոտության արդյունքների մեկնաբանությունը ենթադրում է ստացված քանակական և որակական արդյունքների հոգեբանական իմաստի բացատրություն՝ ելնելով առաջադրված տեսական դրույթներից:

Հետազոտության ընթացքում ստացված բոլոր արդյունքները անպայման ամիրաժեշտ է մեկնաբանել: Արդյունքների մեկնաբանությունը կատարվում է տեսությունների, հայեցակարգերի, առաջադրված մեթոդաբանական մոտեցումների շրջանակներում, այլ հեղինակների կողմից ստացված փորձարարական տվյալներին հղումներ կատարելու միջոցով, ինչպես նաև հետազոտողի կողմից ուսումնասիրվող հոգեբանական առանձնահատկությունների, մեխանիզմների և երևույթների վերաբերյալ ստացված արդյունքների սեփական հասկացման և մոտեցման միջոցով: Մեկնաբանությունները թույլ են տալիս անել ընդհանրացումներ և եզրակացություններ:

Արդյունքների մեկնաբանությունը միշտ որոշ չափով ենթադրվող և սուբյեկտիվ բնույթ է կրում: Այդ իսկ պատճառով մեկնաբանությունների ներկայացման ոճը ունի այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են. «Ստացված արդյունքը կարելի բացատրել նրանով, որ», «Մեր կարծիքով», «Տվյալ փաստը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ...»: Նման արտահայտությունները ընդունված են գիտության մեջ և չեն նվազեցնում գիտական վերլուծության արժեքը:

5.3 Աշխատանքի ձևավորմանը ներկայացվող պահանջներ

Աշխատանքը պարտադիր էջակալվում է: Էջերի համարակալումը նշվում է էջի ներքևում կենտրոնական մասում կամ աջից: Տիտղոսաթերթը և բովանդակությունը չեն էջակալվում, սակայն մտնում են աշխատանքի ընդհանուր համարակալման մեջ: Էջակալումը սկսվում է ներածությունից, որը սովորաբար համարվում է աշխատանքի 3-րդ էջը:

Աշխատանքի յուրաքանչյուր կառուցվածքային մասը և հիմնական մասի գլուխները պետք է սկսեն նոր էջից: Աշխատանքի կառուցվածքային մասերը, ինչպես նաև հիմնական մասի գլուխների վերնագրերը պետք է գրել մեծատարերով էջի կենտրոնական մասում: Աշխատանքի հիմնական մասը անհրաժեշտ է բաժանել

գլուխների, ենթագլուխների, ենթակետերի, որոնք պետք է ունենան վերնագրեր և համարակալվեն արաբական թվերով:

Գլուխների, ենթագլուխների, ենթակետերի վերնագրերը պետք է հստակ և կարճ ձևակերպված լինեն և արտահայտեն այդ մասի բովանդակությունը: Վերնագրերի մեջ չի թույլատրվում անել տողադարձ:

Ենթագլուխները, ենթակետերը պետք է ունենան հաջորդական համարակալում տվյալ մասի կամ գլխի սահմաններում (1.1, 1.1.1, 1.1.2; 1.2, 1.2.1, 1.2.2 և այլն): Եթե գլուխը ունի մեկ ենթագլուխ կամ ենթագլուխը՝ մեկ ենթակետ, ապա այդ ենթագլուխը կամ ենթակետը չի համարակալվում:

Պետք է ուշադիր լինել, որ խուսափել տրամաբանական սխալներից և կրկնություններից, օրինակ, նույն վերնագիրը տալ ամբողջ աշխատանքին և գլուխներից որևէ մեկին:

Ձեռագրային տեքստը տպագրվում է Word ծրագրով, 12 տառաչափով, **Sylfaen** տառատեսակով, A4 ձևաչափի սպիտակ, ստանդարտ թղթի մեկ կողմի վրա, տողերի միջև տարածությունը՝ 1,5 ինտերվալ: Լուսանցքների չափսերը՝ ձախից 3սմ, աջից 1,5սմ, վերևից 2սմ, ներքևից 2,5սմ: Այս դեպքում, մեկ էջի տողերի քանակը պետք է կազմի 33-35 տող:

Նոր տողից տեքստը տպագրվում է 1,25սմ խորությամբ: Վերնագրերը և ենթավերնագրերը վերևից ու ներքևից տարանջատվում են հիմնական տեքստից՝ 2 ինտերվալ տարածությամբ:

Առանձին բառեր, բանաձևեր, պայմանական նշաններ, գծանկարներ թույլատրվում է տեքստում գրել ձեռագիր՝ գծագրական տառաձևով և միայն սև գույնով:

6. ԿՈՒՐՍԱՅԻՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՍԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ՊԱՅԱՆՁՆԵՐ

Կուրսային աշխատանքները կատարվում են բակալավրիատի ուսման 2-րդ և 3-րդ կուրսերում և ներկայացվում են պաշտպանության ուսումնական տարվա վերջում:

Ուսման երկրորդ կուրսում կատարված *կուրսային աշխատանքը* կրում է միայն տեսական բնույթ: Այս կուրսում կատարված աշխատանքի նպատակն է կատարել որևէ հոգեբանական հիմնախնդրի տեսական ուսումնասիրություն: Գրականության վերլուծությունը կատարվում է վերը նշված պահանջներին համաձայն (Տե՛ս 5.1 կետը):

Աշխատանքի ներածությունը կարող է կազմել 2 էջ, որտեղ անպայման պետք է ներկայացվեն հստակ ձևակերպված նպատակը և խնդիրները:

Աշխատանքի հիմնական մասը կարող է բաղկացած լինել երկու կամ ավելի գլուխներից իրենց ենթագլուխներով:

Երկրորդ կուրսի աշխատանքի ծավալը սովորաբար կազմում է 20-25 էջ:

Երկրորդ կուրսի աշխատանքը կարող է համարվել լիարժեք, եթե.

- ճիշտ են ձևակերպված հետազոտության նպատակը և խնդիրները,
- կատարված է որակյալ տեսական վերլուծություն՝ կատարված են ընդհանրացումներ և պահպանված են հղումների կատարման կանոնները,
- վերջաբանում կատարված է աշխատանքի ամփոփում և ձևակերպված են եզրակացություններ:

Ուսման երրորդ կուրսում կատարված *կուրսային աշխատանքը* առաջին հերթին կրում է հետազոտական բնույթ:

Աշխատանքի ներածությունը կարող է կազմել 2-3 էջ: Ներածության մեջ պետք է հստակ ձևակերպվեն նպատակը և խնդիրները, հիմնավորվեն ընտրված մեթոդները և մեթոդիկաները, ինչպես նաև նշվեն հետազոտության օբյեկտը և առարկան: Աշխատանքը կշահի, եթե հետազոտության արդյունքում հիմնավորվի աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:

Կուրսային աշխատանքը անպայման ներառում է տեսական և հետազոտական բաժիններ, որոնք հիմնականում պետք է համապատասխանեն վերը նշված պահանջներին (Տե՛ս 5.1 և 5.2 կետերը): Հետազոտական մասի

արդյունքների վերլուծության համար կարելի է կիրառել մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ (միջին թվաբանական, մեդիանա, տոկոսային վերլուծություն)¹⁰:

Կուրսային աշխատանքի ծավալը սովորաբար կազմում է 30-35 էջ՝ տեսական և հետազոտական մասերի հավասար հարաբերությամբ:

Կուրսային աշխատանքը կարող է համարվել լիարժեք կատարված, եթե.

- ճիշտ են ձևակերպված հետազոտության նպատակը և խնդիրները,
- կատարված է որակյալ տեսական վերլուծություն. տրված են ինքնուրույն մեկնաբանություններ, կատարված են ընդհանրացումներ, պահպանված են հղումների կատարման կանոնները,
- նշված են օգտագործված մեթոդները, հիմնավորված է այդ մեթոդների ընտրությունը,
- եզրակացությունները հիմնավորված են և հստակ են ձևակերպված:

Ավարտական աշխատանքները կատարվում են բակալավրիատի ուսման

4-րդ կուրսի ընթացքում:

Ավարտական աշխատանքի ներածությունը կարող է կազմել 3-4 էջ:

Ավարտական աշխատանքում ուսումնասիրված հիմնախնդիրը պետք է լինի արդիական: Ավարտական աշխատանքում ներածությունում պետք է հստակ ձևակերպվեն ուսումնասիրության նպատակը, խնդիրները և վարկածը, ընտրված մեթոդները և մեթոդիկաները, ինչպես նաև նշվեն հետազոտության օբյեկտը և առարկան: Ավարտական աշխատանքը պետք է ունենա տեսական և կիրառական նշանակություն: Ցանկալի է, որ ավարտական աշխատանքի հետազոտությունը լինի օրիգինալ, գիտական հետաքրքիր մոտեցումով:

Ավարտական աշխատանքը անպայման ներառում է տեսական և հետազոտական մասեր, որոնք լիովին պետք է համապատասխանեն վերը նշված պահանջներին (Տե՛ս 5.1 և 5.2 կետերը): Հետազոտական մասի արդյունքների վերլուծության համար անհրաժեշտ է մաթեմատիկական վիճակագրության

¹⁰ Տե՛ս՝ Ермолаев О.Ю. Математическая статистика для психологов: Учебник. – М., Московский психолого-социальный институт: Флинта, 2004; Сидоренко Е.В. Методы математической обработки в психологии. – СПб.; ООО “Речь”, 2001.

մեթոդների կիրառում (միջին թվաբանական, մեդիանա, տոկոսային վերլուծություն, կորելյացիոն վերլուծություն, ֆակտորային վերլուծություն և այլն)¹¹:

Ավարտական աշխատանքի ծավալը կազմում է 40-45 էջ՝ տեսական և հետազոտական մասերի հավասար հարաբերությամբ:

Ավարտական աշխատանքը կարող է համարվել լիարժեք կատարված, եթե.

- հստակ նշված և հիմնավորված է ուսումնասիրման արդիականությունը,
- ճիշտ են ձևակերպված հետազոտության նպատակը, խնդիրները և վարկածը,
- հիմնավորված է ուսումնասիրման տեսական և կիրառական նշանակությունը,
- կատարված է որակյալ տեսական վերլուծություն. տրված են ինքնուրույն մեկնաբանություններ, կատարված են ընդհանրացումներ, պահպանված են հղումների կատարման կանոնները,
- հիմնավորված է կիրառվող մեթոդների ընտրությունը,
- կատարված է ստացված արդյունքների որակական և քանակական վերլուծություն, կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ, կատարվել են ստացված արդյունքների մեկնաբանություններ,
- եզրակացությունները հիմնավորված են և հստակ են ձևակերպված:

Մագիստրոսական թեզը իրագործվում է մագիստրատուրայի ուսման երկու տարիների ընթացքում: Թեման հաստատվում է ուսման առաջին կիսամյակի աշնանը: Մագիստրոսական աշխատանքում ուսումնասիրվող հիմնախնդիրը պետք է համապատասխանի մագիստրատուրայի մասնագիտացման ուղղությանը:

Մագիստրոսական թեզը պետք է ունենա որոշակի գիտական նշանակություն և ներդրում հոգեբանության տվյալ բնագավառում, որը պայմանավորված է ուսումնասիրման նորույթով, տեսական և կիրառական նշանակությամբ:

Աշխատանքի նորույթը ապացուցվում է հիմնահարցի հետազոտման գիտական նշանակությամբ, մշակված նոր մոտեցմամբ, ինչպես նաև յուրովի կիրառական մեթոդներով և միջոցներով, որոնք պարտադիր պետք է ունենան տեսական հիմնավորում:

Մագիստրոսական թեզը պետք է լիովին համապատասխանի վերը նշված պահանջներին:

¹¹ Տե՛ս նույնը:

Մագիստրոսական թեզը կարող է լինել և՛ փորձարարական, և՛ տեսական բնույթի ուսումնասիրություն:

Տեսական բնույթի հետազոտությունը կարող է նվիրված լինել մեթոդաբանական հիմնախնդիրների պարզաբանմանը, հոգեբանության պատմության և տեսության հիմնախնդիրներին: Այս կարգի ուսումնասիրության արդյունքում հիմնականում ցանկալի է, որ առաջարկվի նոր հայեցակարգ, մոտեցում կամ հիմնախնդրի յուրովի մեկնաբանություն, որը պետք է խիստ հիմնավորված և ապացուցելի լինի:

Մագիստրոսական աշխատանքի ծավալը կազմում է 50-60 էջ՝ տեսական և հետազոտական մասերի հավասար հարաբերությամբ:

Մագիստրոսական թեզը համարվում է լիարժեք կատարված, եթե.

- հստակ նշված և հիմնավորված է ուսումնասիրման արդիականությունը,
- ճիշտ են ձևակերպված հետազոտության նպատակը, խնդիրները և վարկածը,
- նշված է ուսումնասիրման տեսական և մեթոդաբանական հիմքը,
- նշված է ուսումնասիրման նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը,
- կատարված է որակյալ տեսական վերլուծություն. ցույց է տրված քննադատական մոտեցում, տրված են ինքնուրույն մեկնաբանություններ, կատարված են ընդհանրացումներ, պահպանված են հղումների կատարման կանոնները,
- հիմնավորված է կիռարվող մեթոդների ընտրությունը,
- կատարված է ստացված արդյունքների որակական և քանակական վերլուծություն, կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ, կատարվել են ստացված արդյունքների մեկնաբանություններ,
- եզրակացությունները հիմնավորված են և հստակ են ձևակերպված:

Մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքին ներկայացվում են առավել մասնագիտական խիստ պահանջներ¹²: Մագիստրոսի պատրաստման ծրագրի կառուցվածքում նախատեսվում է երկու հիմնական հատված՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքները ներկայացված են մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման նորմատիվ ժամկետների շրջանակներում տեղավորվող կիսամյակներում:

¹² Տես՝ ԵՊՀ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և ընթացակարգը. Եր., 2007, կետ.1.4:

Ուսումնական և հետազոտական հատվածների ծավալների հարաբերակցությունը
(%) ներկայացված է ստորև՝

	1-ին կիս- ամյակ	2-րդ կիս- ամյակ	3-րդ կիս- ամյակ	4-րդ կիս- ամյակ	Ընդամենը
Ուսումնական	90	80	70	0	60
Հետազոտական	10	20	30	100	40

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ավարտելով աշխատանքի շարադրումը և ձևավորումը՝ ուսանողն որպես կատարող, իր ստորագրություն է դնում աշխատանքի ամենավերջին էջում: Այնուհետև ուսանողը ներկայացնում է աշխատանքը գիտական ղեկավարին, որը, ստուգելով և հավանություն տալով աշխատանքին, նույնպես ստորագրում է այն, ինչը նշանակում է, որ ղեկավարը երաշխավորում է աշխատանքը պաշտպանության, որից հետո միայն ուսանողը կարող է հանձնել աշխատանքը պատասխանատու ամբիոն: Ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը տրվում են գրախոսության:

Պաշտպանությունից մեկ ամիս առաջ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար կազմակերպվում է նախապաշտպանություն: Նախապաշտպանության ընթացքում ուսանողները ներկայացնում են կատարված աշխատանքները հանձնաժողովին, որի որոշմամբ աշխատանքը թույլատրվում է պաշտպանության: Նախապաշտպանության պահին պետք է կատարված լինի աշխատանքի 60-70%:

Գիտահետազոտական աշխատանքների պաշտպանությանը նախապատրաստվելու համար ուսանողը պետք է պատրաստի իր Ելույթը (զեկուցումը) և որոշ անհրաժեշտ պատկերավոր նյութեր (աղյուսակներ, գծանկարներ, սխեմաներ և այլն):

Գիտահետազոտական աշխատանքի պաշտպանության համար ուսանողը Ելույթ է ունենում քննող հանձնաժողովի անդամների առջև: Ելույթի ընթացքում ուսանողը պետք է կարողանա ամբողջական և սպառիչ կերպով ներկայացնել աշխատանքի բովանդակությունը և ստացված արդյունքները: Գիտական Ելույթի հիմնական հաձնարարականները և խորհուրդները ներկայացված են հավելված 3-ում:

Ելույթն ունի որոշակի կառուցվածք և հաջորդականություն: Ելույթի սկզբում ներկայացվում է աշխատանքի թեման և նշվում է գիտական ղեկավարի ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, որից հետո պետք է անցնել աշխատանքի բուն թեմայի ներկայացմանը: Անհրաժեշտ է համառոտ հիմնավորել ուսումնասիրման արդիականությունը, ներկայացնել նպատակը և հետազոտության վարկածը: Այնուհետև, պետք է նշել, թե ինչ տեսությունների և հայեցակարգերի վրա է հիմնվել հեղինակը հիմնախնդիրը ուսումնասիրելիս՝ ցույց տալով տեսական

վերլուծության ուղղությունը և եզրահանգումները: Այնուհետև, անհրաժեշտ է անցնել հետազոտության ներկայացմանը: Հարկավոր է հակիրճ ձևով ներկայացնել, թե ինչպես է կազմակերպվել և ինչ ընթացք է ունեցել հետազոտությունը: Անհրաժեշտ է նշել, թե ինչ մեթոդներ և մեթոդիկաներ են կիրառվել հետազոտության համար, ովքեր են կազմել հետազոտության ընտրանքը: Այնուհետև ներկայացվում են ստացված արդյունքների վերլուծությունը ըստ առաջ քաշված խնդիրների՝ պահպանելով գիտական վերլուծության տրամաբանությունը: Առանձնակի ուշադրություն է պետք դարձնել հետազոտության արդյունքների ներկայացմանը: Արդյունքները ներկայացնելիս անհրաժեշտ է դիմել պատկերային նյութին: Ներկայացվող արդյունքները պետք է լինեն համոզիչ, որը պայմանավորված է գիտական վերլուծության որակով: Ելույթի վերջում անպայման անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության եզրակացությունները և, ըստ անհրաժեշտության, ուսումնասիրության տեսական և կիրառական նշանակությունը: Ավարտելով էլույթը՝ հարկավոր է շնորհակալություն հայտնել հանձնաժողովի անդամներին:

Ելույթից հետո ուսանողը պատասխանում է հանձնաժողովի անդամների և ներկաների հարցերին: Այնուհետև ներկայացվում է ընդդիմախոսի կարծիքը, որտեղ նշվում են աշխատանքի արժանիքները, դիտողությունները, ինչպես նաև՝ արվում հարցադրումներ: Ուսանողը պետք է նախապես ծանոթ լինի ընդդիմախոսի կարծիքին և պատրաստ լինի պատասխանել դիտողություններին: Աշխատանքը կշահի, եթե ուսանողը կարողանա սպառիչ և համոզիչ կերպով պատասխանել հարցերին և դիտողություններին:

Աշխատանքի համար վերջնական գնահատականը նշանակվում է հանձնաժողովի ընդհանուր որոշմամբ, որը հիմնվում է ներկայացված աշխատանքի որակի, պաշտպանության ժամանակ ուսանողի ելույթի և պատասխանների, ինչպես նաև գրախոսականի վրա:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Волков Б.С., Волкова Н.В., Губанов А.В. Методология и методы психологического исследования: Учебное пособие для вузов. – М.: Академический проект; Фонд “Мир”, 2005.
2. Готтсданкер Р. Основы психологического эксперимента. – М.; Изд-во МГУ, 1982.
3. Гудвин Дж. Исследование в психологии: методы и планирование. - СПб.: Питер, 2004.
4. Дорфман Л. Я. Методологические основы эмпирической психологии: от понимания к технологии. – М.: Смысл, Изд. центр “Академия”, 2005.
5. Дружинин В.Н. Экспериментальная психология: Учебник для вузов. – СПб.: Питер, 2003.
6. Ермолаев О.Ю. Математическая статистика для психологов: Учебник. – М., Московский психолого-социальный институт: Флинта, 2004.
7. Коновалова М.Д. Экспериментальная психология: Конспект лекций. – М.: Высшее образование, 2006.
8. Константинов В. В. Экспериментальная психология. Курс практического психолога. – СПб.: Питер, 2006.
9. Корнилова Т.В. Экспериментальная психология: Теория и методы. – М.: Аспект Пресс, 2003.
10. Корнилова Т.В., Смирнов С.Д. Методологические основы психологии. – СПб.: Питер, 2007.
11. Куликов Л.В. Методология и методы психологического исследования. - СПб.: ЛГОУ, 1999.
12. Маклаков А.Г. Общая психология. – СПб. : Питер, 2006. – 583с.
13. Мартин Д. Психологические эксперименты. Секреты психики. – СПб., 2004.
14. Практикум по общей, экспериментальной и прикладной психологии / Под ред. А.А.Крылова, С.А.Маничева.- СПб.: Питер, 2003.
15. Сидоренко Е.В. Методы математической обработки в психологии. – СПб.; ООО “Речь”, 2001.
16. Формы организации самостоятельной работы студентов. Методические рекомендации для студентов СПФ/ Сост.: Горбунова Г.П., Теплинских М.В. – Кемерово, 2002.
17. Яньшин П.В. Практикум по клинической психологии. Методы исследования. – СПб.: Питер, 2004.
18. Goodwin C. James. Research in psychology: methods and design, USA, 1995.

Պարբերական հրատարակությունների և ինտերնետային կայքերի ցուցակ

Գիտական ամսագրեր

1. Հոգեբանություն և կյանք
2. Вестник Московского университета. Серия 14. Психология
3. Вопросы психологии
4. Журнал практического психолога
5. Мир психологии
6. Московский психотерапевтический журнал
7. Психологический журнал
8. Психоаналитический вестник
9. APA Journals
10. Journal of Psychology

Ինտերնետային կայքեր

1. www.psylib.org.ua/books
2. www.psychology.ru
3. www.apa.org
4. www.koob.ru
5. www.vusnet.ru
6. www.psylib.myword.ru
7. www.azps.ru
8. www.psyedu.ru

ԲՈՒՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Թողարկող ամբիոնի անվանումը

ԿՈՒՐՍԱՅԻՆ / ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «.....»

Կատարող՝ *բակալավրիատի ...-ի կուրսի ուսանող/ուհի
անուն, ազգանուն /գրվում է ամբողջությամբ/*

Գիտական ղեկավար՝ *գիտական աստիճանը, կոչումը
ազգանունը, անվան և հայրանվան
սկզբնատառերը*

Երևան – տարեթիվ

ԲՈՒՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Թողարկող ամբիոնի անվանումը

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵՋ

Թեմա՝ «.....»

Կատարող՝ *մագիստրատուրայի ուսանող/ուհի*
անուն, ազգանուն /գրվում է ամբողջությամբ/

Գիտական ղեկավար՝ *գիտական աստիճանը, կոչումը*
ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը

Երևան – տարեթիվ

Գիտական ելույթի հիմնական հաճնարարականներ և խորհուրդներ

- Ելույթից առաջ ներկայացե՛ք, հայտնե՛ք թեմայի վերնագիրը, աշխատանքի ղեկավարի անունը և ազգանունը, նրա գիտական աստիճանը և կոչումը:
- Աշխատե՛ք պահպանել զեկույցի համար տրված ժամանակը:
- Ձեկուցե՛ք լսարանին հասանելի ձայնով, միջին արագությամբ՝ պահպանելով խոսքի առողջանությունը:
- Հարգե՛ք լսարանին և խուսափե՛ք հայտնի, ակնհայտ փաստերի ներկայացումից և մեկնաբանություններից:
- Աղյուսակները և նկարները ցուցադրելիս օգտագործե՛ք ցուցափայտ կամ ճառագայթային լապտեր (լազեր):
- Աշխատե՛ք նվազագույնս օգտվել տեքստից և ուղղե՛ք ձեր հայացքը լսարանին:
- Հարցը լսե՛ք մինչև վերջ, իսկ եթե կա անհասկանալի հարցադրում, խնդրե՛ք պարզաբանել այն:
- Հարցերին պատասխանե՛ք ըստ էության և համառոտ:
- Խուճապի մի՛ մատնվե՛ք գիտական քննադատության և բանավեճի ժամանակ:
- Պահպանե՛ք հոգեբանության էթիկայի կանոնները:



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎՍՏԱՐԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ФИЛОСОФИИ И ПСИХОЛОГИИ**

Կազմողներ՝

**հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Միքայելի Ավանեսյան
հոգեբանական գիտությունների թեկնածու Նարինե Գագիկի Խաչատրյան**

**Ուսանողական գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ
(մեթոդական ուղեցույց հոգեբանության բաժնի ուսանողների համար)**

Составители:

**доктор психологических наук, профессор Аванесян Грант Михайлович
кандидат психологических наук, доцент Хачатрян Нарине Гагиковна**

**Требования к студенческим научным работам
(методические указания для студентов отделения психологии)**